ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՅԺՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 89- 90 (16790) ՇԱԲԱԹ 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԸ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»

ՄԻԽԵԻԼ ԲԱՏԻԱՇՎԻԼԻՆ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԵՂԱՎ ՍԵՓԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Նոյեմբերի 7-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Նիստում վարչապետը, հանրագումարելով վերջին ժամանակների իրադարձությունները, հայտնեց, որ ներկա դրությամբ գլխավոր հիմնախնդիրներն են՝ նոր աշխատատեղերի ստեղծումը, կրթության եւ անվտանգության ոլորտները:

- Այս երեք ուղղություններին մենք պետք է առավել ուշադրությամբ մոտենանք:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ ՄԻՏՔԸ ՀԱՂԹԵԼ Է, ԵՎ ՆՐԱ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԱՆՇՐՋԵԼԻ Է»



Նոյեմբերի 6-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Երեւանի Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում մասնակցեց «Սինոփսիս Արմենիա» ընկերության հիմնադրման 15-ամյակին նվիրված միջոցառմանը եւ ՏՏ ոլորտում Հայաստանի պետական կրթական մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությանը:

Նա անձամբ պարգեւներ հանձնեց «Գլխավոր մրցանակ», «Լավագույն ասպիրանտ», «Լավագույն մագիստրոս», «Լավագույն բակալավր», «Լավագույն սփյուռքահայ ուսանող» եւ «Լավագույն աշակերտ» անվանակարգերում հաղթող ճանաչված 47 մրցանակակիրներին:

Իր խոսքում Հայաստանի վարչապետը, խոսելով երկրում «Սինոփսիս» ընկերության 15-ամյա արդյունավետ գործունեության մասին, նշեց, որ այն ուղղված է եղել երկրում մտքի զարգացմանը, եւ որ երկրում միշտ հաղթել է միտքը, ու նրա հաղթանակը անշրջելի է:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՌԱՅԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Նոյեմբերի 6-7-ը Բաթումիի «Hilton» հյուրանոցում անցկացվեց Վրաստանի պաշտպանության եւ անվտանգության 13-րդ խորհրդաժողովը (GDSC):

Խորհրդաժողովին, որի բացմանը ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին, մասնակցում էին Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը, Բուլղարիայի պաշտպանության փոխնախարար Աթանաս Զարիանովը, Թուրքիայի պաշտպանության փոխնախարար Յունուս Էմրե Կարաօսմանօղլուն, Եվրոպայում ԱՄՆ-ի բանակի հրամանատար Քրիստոֆեր Քավոլին, ամերիկացի կոնգրեսական Ադամ Քինզինգերը, պաշտպանության եւ անվտանգության ոլորտի փորձագետ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Նոյեմբերի 6-ին Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Բաթումիում անցկացվող Վրաստանի պաշտպանության եւ անվտանգության 13-րդ խորհրդաժողովի աշխատանքին մասնակցելու նպատակով Վրաստանում աշխատանքային այցով գտնվող Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին պաշտպանության ոլորտում Վրաստանի եւ Հայաստանի համագործակցության հարցեր, կարծիքներ փոխանակեցին տարածաշրջանում անվտանգ իրավիճակների եւ մարտահրավերների վերաբերյալ:

Երկու պետությունների պաշտպանության նախարարները կարեւորեցին տարածաշրջանային անվտանգության ամրապնդման ուղղությամբ համագործակցության զարգացումը, պայմանավորվածության հասան պաշտպանության ոլորտում համագործակցությունն ընդլայնելու եւ մի շարք նոր ուղղություններ ներառելու հարցերում:

Նշենք, որ Վրաստանում Հայաստանի դեսպանությունը իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է լուսանկար Վրաստանի պաշտպանության եւ անվտանգության 13-րդ համաժողովից՝ «Համաժողովի սելֆի» վերտառությամբ:

Նկարում.- (ձախից)՝ Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը, Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող 296 բանաձեւին կողմ քվեարկած ամերիկացի կոնգրեսականներ Ադամ Քինզինգերը եւ Ալեքս Մուն, Աջարիայի կառավարության ղեկավար Մամուկա Ռիժվաձեն:

ԱՅՑ

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 4-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան մեկօրյա այցով գտնվում էր Նիդերլանդներում: Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ իր գործընկերոջ՝ Մարկ Ռուտեի հետ:

Կողմերը զրուցեցին անվտանգության տեսանկյունից գոյություն ունեցող մարտահրավերների, ինչպես նաեւ Վրաստանի բռնազավթված տարածաշրջաններում ստեղծված բարդ մարդասիրական իրավիճակի մասին:Մարկ Ռուտեն մեկ անգամ եւս հաստատեց Նիդերլանդների թագավորության աջակցությունը Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության նկատմամբ: Հանդիպմանը քննարկվեցին նաեւ երկու երկրների միջեւ տարբեր ոլորտներում գոյություն ունեցող հաջող համագործակցությանը վերաբերող հարցեր:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՏԵՂԱՑԻՆԵՐԻՆ ՀՈՒՁՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Նոյեմբերի 5-ին, Ախալքալաքիում Վրաստանի Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, երկրի մի շարք նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացվող քարոզարշավի շրջանակներում, հանդիպում ունեցավ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը, որին, բացի ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից, ներկա էին Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսարիոն Ամի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀՈՒՇԱԳԻՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

Նոյեմբերի 6-ին Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում, Մատենադարանի եւ Վրաստանի Կորնելի Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնի միջեւ ստորագրվեց հուշագիր:

Այն հնարավորություն կընձեռի իրականացնել համատեղ գիտակրթական եւ մշակութային ծրագրեր, մասնագետների փոխանակում, համատեղ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄՏՆԵԼՆ ԱՄԵՆԱԱՐԺԵՔԱՎՈՐՆ ԷՐ, ԻՆՉ ԵՐԲԵՎԻՑԵ ԱՐԵԼ ԵՄ ԿՅԱՆՔՈՒՄ»

«Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության հիմնադիր եւ նախագահ Բիձինա Իվանիշվիլին Entrepreneur Georgia հրատարակությանը տված հարցազրույցում հայտարարեց, որ քաղաքականություն մտնելը ամենաարժեքավորն է եղել նրա գործունեությունում:

- Եթե գնահատելու լինենք արդյունքներով, ապա քանի որ քաղաքականության մեջ իմ մասնակցությունը օգնեց ու թույլ տվեց խաղաղ ճանապարհով իշխանությունից հեռացնել ժողովրդին ճնշելու վրա հենված ռեժիմը, ուրեմն, երեւի թե, այն համարեմ ամենաարժեքավորը, որը երբեւէ իրագործել եմ կյանքում,- հարցազրույցում նշեց Բիձինա Իվանիշվիլին:

Պատասխանելով գործարարության եւ բարեգործության ոլորտում Բիձինա Իվանիշվիլու գործունեության մասին հարցին՝ «Վրացական երազանքի» նախագահը նշեց, որ բարեգործությունը գնահատելի է միայն այն ժամանակ, երբ այն իրականացվում է առանց ավելորդ ցուցադրության: Եվ այդպես էր այնքան ժամանակ, քանի դեռ ինքը չմիջամտեց քաղաքական գործընթացին:

- Սակայն կարծում եմ, որ ամենաարժեքավորը, ինչ արել եմ բարեգործության տեսանկյունից, դա իմ մասնակցությունն է քաղաքականությանը: Քանի որ բարեգործությանը բնորոշ փոխհատուցված չլինելուն զուգահեռ, նախորդ իշխանության պայմաններում քաղաքականության մեջ մասնակցությունը վտանգի էր ենթարկում ոչ միայն իմ սեփականությունը, այլեւ իմ ու ընտանիքիս անդամների կյանքը,- ասաց Բիձինա Իվանիշվիլին:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԸ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հատկապես, կրթության բարեփոխմանը, ինչը պահանջում է առավել արագ, արդյունավետ զարգացում եւ համոզված եմ, որ գործընկերները, թիմը, որը գործում է կրթության նախարարությունում այդ ուղղությամբ, կշարունակի արդյունավետ աշխատանքը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Վարչապետի հայտարարությամբ, Վրաստանի կրթության, գիտության, մակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին խնդրել է սեփական դիմումի համաձայն իրեն ազատել զբաղեցրած պաշտոնից:

- Հարցը, որը ես կցանկանայի քննարկել ձեզ հետ միասին, մեր գործընկերներից մեկի՝ Միխեիլ Բատիաշվիլու խնդրանքն է՝ սեփական դիմումի համաձայն հեռանալ կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարարի պաշտոնից: Առաջին հերթին, մենք բոլորս պետք է շնորհակալություն հայտնենք Միխեիլ Բատիաշվիլուն այն գործունեության համար, որը ծավալել է կրթության ոլորտի բարեփոխման գործում եւ, իհարկե, այն նվաճումների համար, որոնք մենք վերջին տարիներին գրանցել ենք սպորտում ու մշակույթում,- նշեց Գիորգի Գախարիան:

Կառավարության նիստում հողերի գրանցման գործընթացի թեմայով ելույթ ունեցավ Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, որը մանրամասն տեղեկություններ հաղորդեց պետական նշանակության գործի վերաբերյալ: Ինչպես նշեց վարչապետը, գործընթացը նշանակալի է յուրաքանչյուր քաղաքացու, առավելապես՝ գյուղերի բնակիչների եւ այն մարդկանց համար, ովքեր գյուղական վայրերում ունեն հողամասեր:

- Դա կարեւոր է նաեւ մեր էկոնոմիկայի համար, քանի որ հողը մեր էկոնոմիկայի նշանակալի ռեսուրսն է: Այսօր մենք ողջ պատասխանատվությամբ կարող ենք հայտարարել, որ համակարգային գրանցման պայմաններում, առաջիկա երեք տարիների ընթացքում այդ հարցը վերջնականապես կկարգավորենք,- հայտարարեց վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀՈՒՇԱԳԻՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ուսումնասիրություններ, հրատարակություններ, ցուցահանդեսներ: Հուշագիրը ստորագրեցին Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղեւոնդյանն եւ Վրաստանի Կորնելի Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնի տնօրեն Ջաալ Աբաշիձեն:

Միջոցառմանը ներկա էր Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն:



ԱՄՆ

ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Սահմանափակումներն այս անգամ վերաբերում են շինարարական սեկտորին, որը Վաշինգտոնի կարծիքով, ուղղակի կամ անուղղակի կերպով Իրանի էլիտար ռազմական ձեւավորման ենթակայության տակ է:

Պատժամիջոցների նպատակը Իրանի կողմից միջուկային զենքի ձեռքբերման ժամանակի դանդաղեցնելն է:

ՍԻՐԻԱ

ԱՄԵՐԻԿՅԱՆ 800 ԶԻՆԾԱՌԱՅՈՂ՝ ՆԱՎԹԱՀԱՆՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը նոյեմբերի 1-ին հանդիպել է Պենտագոնի ներկայացուցիչներին, որից հետո հաստատել է ծրագիրը, ըստ որի, Սիրիայի արեւելյան մասում ընդլայնվելու է ամերիկյան զինծառայողների տեղակայման գոտին: Ամերիկացի զինվորականները տեղակայվելու են քրդերի ռազմական միավորումների կողմից վերահսկվող տարածքում, Դեր Զորի եւ Հասակեի միջեւ: ԱՄՆ-ը Սիրիայում կթողնի 800 զինծառայող: Նրանք Սիրիայում «Իսլամական պետության» անդամներից պաշտպանելու են նավթի հանքերը:

ՖՐԱՆՍԻԱ

ՆԵՐԳԱՂԹԻ ԿԱՐԳԸ ԽՍՏԱՑՎՈՒՄ Է

Ֆրանսիայի իշխանությունները խստացնում են ներգաղթի կարգը:

Ֆրանսիայի վարչապետ Էդուարդո Ֆիլիպի կողմից հանրայնացված ծրագրի համաձայն, իշխանությունները ծրագրում են ապամոնտաժել ներգաղթյալների մի քանի վրանների քաղաքները, ինչպես նաեւ նախատեսում են քվոտաներ երկրում ներգաղթյալների օրինական աշխատանքի համար:

Նոր օրենքի համաձայն, Ֆրանսիա նոր մուտք գործած ապաստան փնտրողները չեն կարողանա օգտվել առողջապահական ծառայություններից, բացառությամբ՝ շտապ բժշկական դեպքերի:

ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԻՆՈԴԻ ՆԻՍՏԸ

ՈՉ ՄԻԱՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ, ԱՅԼԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՍԱԴՐԱՆՔ

Դեռեւս երկու տարի առաջ վրաց Պատրիարքարանի շուրջ սկսված «ցիանիդի պատմությանը» հաջորդեց ընթացիկ տարվա հոկտեմբերի 24-ին Բոդբեի միտրոպոլիտ, արքեպիսկոպոս Իակոբ Իակոբաշվիլու հայտարարությունը, ըստ որի, Գիորգի Կվիրիկաշվիլու վարչապետության օրոք, իբր, կայացել էր հանդիպում, որի մասնակիցները՝ ներքին գործերի նախկին նախարար, ներկայիս վարչապետ Գիորգի Գախարիան, պետական անվտանգության ծառայության նախկին ղեկավար, ներկայիս ՆԳ նախարար Վախթանգ Գոմելաուրին, միտրոպոլիտի եւ մյուս հոգեւորականների հետ քննարկել են Կաթողիկոս-Պատրիարքի հնարավոր պաշտոնաթողության հարցը:

Հոգեւոր կյանքում իբր աշխարհիկ իշխանության անհարկի միջամտության վկայություն հանդիսացող այս հայտարարությունը լայն արձագանք էր առաջացրել՝ դառնալով հասարակության տարբեր խավերի քննարկման առարկա: Այն ներառվեց նաեւ Վրաց Ուղղափառ եկեղեցու հոկտեմբերի 31-ին անցկացված Սուրբ Սինոդի օրակարգում: Թեպետ, Սուրբ Սինոդում սահմանված կարգը որոշակիորեն խախտեց Արեւմտյան Վրաստանի Սամեգրելոյի տարածքում գործող Եղոնդիդելու միտրոպոլիտ, արքեպիսկոպոս Պետրեն, որը հանդես եկավ առանձին հոգեւորականներին մերկացնող հայտարարություններով՝ նրանց մեղադրելով շահամոլության, մանկապղծության եւ այլ հանցագործությունների կատարման մեջ:

Սուրբ Սինոդի նիստին, որը նախագահում էր Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, ներկա էր 42 քահանայապետ: Նիստին, Սուրբ Սինոդը որոշել է սարկավագ Գիորգի Մամալաձեի (որն արդեն 2 տարի է՝ բանտում է) հարցով (ցիանիդի գործով) Վրաստանի նախագահին ներկայացնել համաներման առիթով միջնորդություն՝ հաշվի առնելով նրա ընտանիքի բարդ վիճակն ու բազմաթիվ խնդրանքները եւ երաշխավորել համաներումը:

Սուրբ Սինոդը քննարկեց նաեւ արքեպիսկոպոս Իակոբի (Իակոբաշվիլի) կողմից հրապարակավ հայտարարությունները: Արքեպիսկոպոսն ապաշխարեց անվայել ելույթի համար: Սուրբ Սինոդը վճռեց. արքեպիսկոպոս Իակոբին անվայել պահվածքի պատճառով տալ զգուշացում, իսկ կրկնելու դեպքում՝ սահմանել խիստ միջոցներ:

Քահանայապետերը քննարկեցին նաեւ Եղոնդիդելու միտրոպոլիտ Պետրեի (Ցաավա) կողմից Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի եւ Սուրբ Սինոդի նկատմամբ բազմաթիվ հրապարակավ վիրավորական հայտարարությունների հարցը: Սուրբ Սինոդի քահանայապետերը Կաթողիկոս-Պատրիարքին վիրավորելու, անհիմն մեղադրելու, հաճախ վարկաբեկելու եւ այլ խախտումների պատճառով, Պետրեին միաձայն կոչ են արել ապաշխարել:

Պետրեն իրեն մեղավոր չի համարում եւ չի համաձայնել Սինոդի կոչերին:

Միտրոպոլիտ Պետրեն ազատվել է թեմի առաջնորդի եւ Սուրբ Սինոդի անդամակցության պաշտոնից եւ ապաշխարելու համար ուղարկվել վանք:

Նշենք, որ Սուրբ Սինոդի նիստի արձանագրության հրապարակումից հետո, Վրաց Ուղղափառ եկեղեցու Պատրիարքարան այցելեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան եւ հանդիպում ունեցավ Իլիա Երկրորդի հետ: Վրաստանի վարչապետը եկեղեցում վերջին ժամանակներում զարգացած իրադարձությունները որակեց՝ որպես պետության եւ եկեղեցու նկատմամբ գրոհ: Նրա խոսքով, որոշ խմբեր, որոնք չենք ցանկանում երկրի խաղաղ զարգացումը, փորձում են երկրին վնաս հասցնել տարբեր տիպի սադրանքներով:

Վրաց Ուղղափառ եկեղեցու ղեկավարի հետ հանդիպում ունեցավ նաեւ «Վրացական երազանք» կառավարող կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին: Հանդիպման առանցքում եղել է նախորդ շաբաթ սկսված եկեղեցական սկանդալը: Խոսել են «անպատասխանատու» հայտարարության մասին, որը մեծ խառնաշփոթ է առաջացրել: Իվանիշվիլու խոսքով, այս գործողություններն ուղղված են ոչ թե եկեղեցու, այլ պետության դեմ:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ԵՎՐԱՆՏԼԱՆՏՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՌԱՅԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներ, քաղաքացիական հասարակության, մամուլի եւ ակադեմիական օղակների ընդհանուր առմամբ 230-ից ավելի ներկայացուցիչներ:

Ինչպես նշվեց խորհրդաժողովում, վերջին 13 տարվա ընթացքում, Վրաստանի պաշտպանության եւ անվտանգության խորհրդաժողովը տարածաշրջանում ձեւավորվել է որպես բացառիկ համաժողով, որտեղ քննարկվում են եվրատլանտյան անվտանգության եւ տարածաշրջանային կայունության առջեւ ծառացած մարտահրավերները:

Խորհրդաժողովն անցկացվեց չորս փոխներգործուն նստաշրջաններով: Մասնավորապես, խորհրդաժողովի օրակարգ ներառվեցին Սեւծովյան անվտանգության հարցեր, Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանն ինտեգրման ճանապարհին գրանցած առաջընթացը եւ անդամակցության հեռանկարները, Հիբրիդային վտանգներն ու Վրաստանի ռազմավարական պատրաստակամությունը:

- Շատ հաճելի է, որ այսօր Բաթումիում նման կարեւոր խորհրդաժողով է անցկացվում: Այն Վրաստանի կարեւոր վայրերից է մեր տարածաշրջանի անվտանգության համար,- հայտարարեց Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին՝ ելույթ ունենալով խորհրդաժողովի բացմանը:

Խորհրդաժողովին ելույթ ունեցավ նաեւ Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը: Նա հանդես եկավ «Սեւծովյան տարածաշրջանում անվտանգության արդի մարտահրավերները» խորագրով բանախոսությամբ:



ԲԵՔԱ ԴՈՆՎԻՐԻՆ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Բեքա Դոնվիրին, միաժամանակ նշանակվել է կառավարության խորհրդարանական քարտուղար:

2017 թվականից մինչեւ 2019 թվականի սեպտեմբերը Բեքա Դոնվիրին զբաղեցնում էր Վրաստանի ՆԳՆ իրավաբանական դեպարտամենտի տնօրենի, իսկ մինչ այդ՝ էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության իրավաբանական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնը:

ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ՝ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՍԱԹՈՇԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ներկա դրությամբ, կենսաթոշակային կուտակային համակարգում 900 հազար 688 մարդ է ներգրավված: Կենսաթոշակային հիմնադրամի արժեքը կազմում է 361 միլիոն 374 հազար 58 լարի՝ գումարած հաշվեգրված տոկոսագումարը՝ 8 միլիոն 620 հազար 849 լարի: Կենսաթոշակային հիմնադրամում ներգրավված է 58 հազար 292 ընկերություն:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԱՏԱՐ

ԱՄՆ ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԶԵԿՈՒՅՑԸ

ԱՄՆ պետդեպարտամենտը հրապարակեց 2018 թվականի ահաբեկչության դեմ պայքարի հաշվետվությունը: Ներկայացված զեկույցում, այլ երկրների շարքում գնահատական է տրվել նաեւ ահաբեկչության դեմ պայքարի տեսանկյունից Վրաստանի կողմից իրականացված միջոցառումներին:

Փաստաթղթում նշված է, որ Վրաստանի պետական անվտանգության ծառայությունն առաջատար հաստատություն է ահաբեկչության դեմ պայքարի առումով: Վրաստանը, երկար ժամանակ լինելով «Իսլամական պետության» դեմ պայքարող դաշինքի անդամ, 2018 թվականին ԱՄՆ-ի հետ միասին շարունակում է ակտիվ ներգրավվել ահաբեկչության դեմ պայքարում,- ասված է ԱՄՆ պետական դեպարտամենտի ահաբեկչության մասին զեկույցում:

«Վրաստանի պետական անվտանգությունը ձերբակալել եւ դատապարտել է 8 անձի, «Իսլամական պետության» անդամ Ահմեդ Չատաեւի աջակցության համար, ում 2017 թվականին Թբիլիսիում սպանեցին հակաահաբեկչական գործողության ժամանակ: Պետական անվտանգության ծառայության հաշվետվությամբ, Սիրիայում եւ Իրաքում գտնվում է Վրաստանի մոտ 14 քաղաքացի, ովքեր աջակցում են ահաբեկչական խմբավորումներին»,- նշված է ԱՄՆ պետական դեպարտամենտի զեկույցում:

Ըստ փաստաթղթի, 2018 թվականին Վրաստանում ահաբեկչական միջադեպ չի գրանցվել: Զեկույցում նշված է, որ, 2018 թվականին քրեական օրենսգրքում փոփոխություններ մտցնելով, Վրաստանը հզորացրեց հակաահաբեկչական օրենսդրությունը: Նոր փոփոխություններով, քննիչները եւ դատախազները իրավունք ունեն վկաներին հարցաքննել հեռակա կարգով:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՇՈՄՈՍԱՎԼԵԳՈՒՆ ՍԱՄՍԱԽՈՒՐՈ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Նոյեմբերի 6-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Վախթանգ Լաշքարաձեն եւ ծառայության պետի տեղակալ Զուրաբ Զնելաշվիլին հանդիպում ունեցան Վրաստանի բիզնեսասոցիացիայի եւ այդ կազմակերպության անդամ ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին արտադրանքի թողարկման եւ իրացման գործընթացում առկա կորուստների հարկադրման հետ կապված հիմնախնդիրներն ու դրանց կարգավորման ուղիները: Նաեւ խոսեցին ապրանքանյութական արժեքների դուրսգրման, գործընթացի պարզաբանման հնարավորությունների մասին:

- Հիմնախնդիրների կարգավորման հարցով առաջիկայում էլ խորհրդատվությունները կշարունակվեն եւ անպայման կնշակենք այնպիսի փաստաթուղթ, որը ձեռնտու լինի ինչպես հարկային վարչարարության, այնպես էլ՝ գործարարների համար,- հայտարարեց եկամուտների ծառայության պետ Վախթանգ Լաշքարաձեն:

Հանդիպումն անցկացվեց երկխոսության ձեւաչափում:

Աշխատանքային հանդիպմանը ներկա էին նաեւ Վրաստանի բիզնեսասոցիացիայի գործադիր տնօրեն Լեւան Վեփխվաձեն եւ Վրաստանի ֆինանսների նախարարության հարկային ու մաքսային քաղաքականության դեպարտամենտի ղեկավար Մամուկա Բարաթաշվիլին:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ից ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՉՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ ՍԻԳԱՐԵՏՆԵՐԻ ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԸ

Վրաստանի հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում, նոյեմբերի 21-ից արգելվում է չփաթեթավորված ծխախոտեղենի ցանկացած արտադրանքի, այդ թվում՝ թութունի, ծխամորճի թութունի, նարգիլեի, թութունի առքուվաճառքը: Վերոնշյալ արտադրանքի վաճառքը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե այն 50 կամ 100 գրամանոց նախնական փաթեթավորում ունի: Այդ արտադրանքը պետք է սահմանված կարգով լինի ակցիզավորված: Նոյեմբերի 21-ից առանց ակցիզավորման արգելվում է նաեւ էլեկտրոնային սիգարետների համար նախատեսված հեղուկի վաճառքը: Առանց փաթեթավորման սիգարետի վաճառքի համար սահմանված է վարչական պատասխանատվություն: Իրավախախտման համար տուգանքը կազմում է 2000 լարի, իսկ կրկնակի խախտման դեպքում՝ 4000 լարի:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

MAGTI

ՄԱԳԹԻԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ
ՀԱՄԱՑԱՆՑ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՌԱՆՑ ԼԻՄԻՏԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱՅԻՆՈՎ,
ԱՄՍԱԿԱՆ՝ 34 ԼԱՐԻՈՎ

Օպտիկական – մանրաթելային համացանց
20 մգ/վրկ փաթեթ

IP հեռուստատեսություն
Վերափաթեթավորման գործառույթով – 105 ալիք

Բջջային հեռախոս
Սերվիս «Մերոնք», առանց լիմիտի
խոսակցություն Մագթիկոմի բջջային
ցանցով ընտանիքի 4 անդամների միջև

Նվեր
- WiFi սարք տանը՝ համացանցի ազդանշանի տարածման համար
- Հեռուստատեսության 1 լրացուցիչ փաթեթ

Ծրագրերի մուտքագրումը՝ անվճար
Առաջարկությունը ուժի մեջ է միացումից հետո 2 տարվա ընթացքում

Կապվեք՝ 11 00 11 - բջջային ցանցով,
032 217 00 00 – ցանկացած ցանցով
Մագթիկոմի ցանցով հեռախոսազանգը անվճար է:

www.magticom.ge

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ռանաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, ինչպես նաեւ Հանրային ռեեստրի, արդարադատության նախարարության, էկոնոմիկայի եւ ենթակառուցվածքների զարգացման նախարարության, շրջակա միջավայրի եւ գյուղատնտեսություն նախարարության, Ժվանիայի անվան վարչարարական դպրոցի ներկայացուցիչները, Քեթեւան Ցիխելաշվիլին մանրամասն խոսեց այնպիսի նշանակալի նախագծերի վերաբերյալ, ինչպիսիք են «Սերմանի'ր ապագան», կոոպերատիվների հիմնման մեխանիզմներն ու հեռանկարները, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության ծրագրերը, «Արտադրի'ր Վրաստանում» ծրագիրը, ագրովարկերի եւ ագրոապահովագրության ծրագրերը եւ այլն: Ինչպես նշեց պետնախարարը, անհաժեշտության դեպքում, թեմատիկ քննարկումները կանցկացվեն վրացերեն եւ հայերեն: Պետնախարարը կարեւորեց նման հանդիպումների անցկացումը եւ հայտարարեց, որ գյուղերի բնակիչները պետք է մարնամասն տեղեկություն ստանան բոլոր այն սպասարկումների, ծրագրերի եւ նախագծերի մասին, որոնք պետության կողմից իրականացվում են առողջապահական, սոցիալական, գյուղատնտեսական, թե էկոնոմիկայի ոլորտներում:

- Մեր խնդիրն է, որպեսզի մարդիկ համապատասխան տեղեկություն ստանան, այդ թվում մայրենիով, որ կարողանան նեգրավվել եւ օգտվել իրականացվող ծրագրերից, քանի որ մեր քաղաքականությունը հիմնված է քաղաքացիների իրավահավասարության եւ երկրի բոլոր ոլորտներում առավելագույն ներգրավման վրա: Իսկ ներգրավվածությունը սկսվում է տեղեկատվության փոխանցումից, որը եւ մենք իրականացնում ենք այսօր: Հուսով եմ, որ մենք ընդհանուր ուժերով եւ, բնականաբար, բնակչության նպատակամղվածությամբ, կհասնենք նրան, որ այս երկրամասը, ինչպես մյուս բոլոր տարածաշրջանները, առավելագույնս ներգրավված կլինեն եւ կօգտվեն այն ծրագրերից, որոնք իրականացվում են Վրաստանի քաղաքացիների համար: Մենք միտված ենք նրան, որ տեղեկությունը փոխանցվի մայրենիով, եւ այդ ուղղությամբ ջանքերի գործադրումը մշտապես կշարունակենք,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին եւ հավելեց, որ հանդիպման մասնակիցները գյուղերի բնակիչներին մանրամասն տեղեկություն պետք է ներկայացնեն վերոնշյալ ծրագրերի մասին:

Պետնախարարն անդրադարձավ նաեւ պետական լեզվի ուսուցման որակի բարձրացման անհրաժեշտությանը՝ նշելով, որ դա տեղի բնակչությանը տեղեկության հասանելիության կարեւորագույն նախադրյալներից մեկն է:

Վրաստանում, կառավարության նախաձեռնությամբ իրականացվող նախագծերին եւ ծրագրերին անդրադարձավ նաեւ Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսարիոն Ամիրանաշվիլին: Նա եւս կարեւորեց տեղեկատվության հասանելիության հարցը՝ հավելելով, որ դա հնարավոր կլինի ապահովել միայն այն դեպքում, եթե տեղեկությունը փոխանցվի ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզուներով:

Հանդիպմանը ուշադրություն հատկացվեց տեղի բնակչությանը հուզող հիմնախնդիրներին: Մասնավորապես, բարձրացվեցին հողատարածքների սեփականաշնորհմանը, երիտասարդ ընտանիքներին հողատարածքներով ապահովելուն, Վրաստանի քաղաքացիության կորստին եւ դրա վերականգնման հետ կապված բարդույթներին վերաբերող հարցեր: Խոսեցին նաեւ առանձին գյուղերում եկեղեցիների, դպրոցների վթարային շենքերի անհապաղ վերանորոգման անհրաժեշտության մասին: Կրկին անդրադարձ կատարելով տեղեկության հասանելիության հիմնախնդրին՝ նշվեց, որ օգտակար եւ հետաքրքիր ծրագրերի մասին տեղեկությունը ժամանակին չի հասնում կամ հասնում է այն ժամանակ, երբ մոտենում է դրանց վերջնաժամկետը: Բարձրացվեց նաեւ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչների համար քննությունների անցկացման հարցը, ինչը հնարավորություն կտա կարգավորել ուսուցիչների միջեւ աշխատավարձերի տարբերությունը:

Վերոնշյալ հարցերի շուրջ խոսեցին Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր Համլետ Մովսիսյանը, ուրիշներ:

Հանդիպման ավարտին, Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահասավարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, պատասխանելով իրեն հասցեագրված հարցերին, հայտարարեց, որ երկրամասի գյուղերի բնակիչների հետ հանդիպումները կկրեն պարբերական բնույթ, ինչը հնարավորություն կընձեռի մարդկանց հուզող հիմնախնդիրները հասցնել կենտրոնական եւ տեղական իշխանություններին:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՀԱՄԵՐԳ

«ՄԱՄԻԿՈՆ, ՔԵԶՆՈՎ ՀՊԱՐՏԱՆՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԸ»

Այս խոսքերը պատկանում են վրաց հանրահայտ կոմպոզիտոր Վաժա Ազարաշվիլուն, ով նոյեմբերի 2-ին ներկա էր Թբիլիսիի Կոնսերվատորիայի Մեծ դահլիճում կայացած համերգին, որտեղ հանդես եկավ թբիլիսցի ճանաչված դաշնակահար Մամիկոն Նահապետովը: Վաժա Ազարաշվիլու հետ համակարծիք էին նաեւ Մամիկոն Նահապետովի թբիլիսյան համերգին ներկա, ճանաչված կոմպոզիտորներ Կախա Ցաբաձեն, Գիորգի Շեւարդաշվիլին, Օթար Տատիշվիլին:

Ճանաչված եւ խոստումնալից դաշնակահարներ Մամիկոն Նահապետովը եւ Անահիտ Ստելմաշովան

Թբիլիսիում ծնված 37-ամյա Մամիկոն Նահապետովը դաշնամուրի եւ թավջութակի դասերն անցել է պրոֆեսորներ Սվետլանա Կորսանտի եւ Դավիթ Ռեիզների մոտ: Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայի մագիստրատուրայում նա ուսուցումն անցավ պրոֆեսորներ Նոդար Գաբունիայի եւ Նանա Խուբուտիի (դաշնամուր), Նանա Դմիտրիադու եւ Իրինա Սաբաշվիլու (գեղարվեստական նվագակցում), Նանա Լեսելիձեի (կամերային երաժշտություն) ղեկավարությամբ: 2005 թվականից ապրում է Մյունխենում, որտեղ ավարտել է երաժշտության եւ թատրոնի համալսարանի դաշնամուրի ասպիրանտուրան ու գեղարվեստական նվագակցության ասպիրանտուրան: 2008 թվականից նույն համալսարանի դոցենտ է: Մամիկոն Նահապետովը ե'ւ որպես մենակատար, ե'ւ նվագախմբի հետ պարբերաբար մասնակցել է համերգների եւ ակտիվ մասնակցություն ցուցաբերել Վրաստանում, Հայաստանում, Գերմանիայում, Շվեյցարիայում եւ այլուր անցկացվող միջազգային երաժշտական փառատոներին:

2017 թվականի նոյեմբերին նա էլիսո Վիրսալաձեի հետ առաջին անգամ հանդես է եկել Թելավիի փառատոնին: Մամիկոն Նահապետովը բազում մրցույթների դափնեկիր է: Նա մրցանակների է արժանացել Վրաստանում, Հայաստանում, Ռուսաստանում, Իտալիայում, Սլովակիայում, Նորվեգիայում եւ Թուրքիայում կայացած միջազգային մրցույթներում:

Բրամսի մրցույթում, առաջին մրցանակի հետ միասին, նրան շնորհվեց «Wiener Musikverein» հատուկ մրցանակը:

Համերգից ստացած իր տպավորությունների մասին խոսելիս, ախալքալաքցի 11-ամյա դաշնակահարուհի Անահիտ Ստելմաշովան ասաց.

- Ինձ բախտ վիճակվեց գտնվել Մամիկոն Նահապետովի թբիլիսյան համերգին եւ ներշնչվել նրա ընկալմամբ մատուցված հանճարեղ Բախի եւ Սեն Սանսի երաժշտությամբ: Հենց առաջին ակորդներից ինձ զարմացրեց այն, թե ի՞նչ հարգանքով եւ զգուշությամբ է նա վերաբերվում դասական երաժշտության շարքում արժանի տեղ զբաղեցրած երաժշտական ստեղծագործությանը:

Անահիտ Ստելմաշովայի հավաստմամբ, Մամիկոնը մեծատառով երաժիշտ է: Արհեստավարժությունն ու անկեղծությունը, որով նա ներկայացրեց երաժշտությունը, հիացրել էր հանդիսատեսին, որը բուռն ու երկարատեւ ծափահարություններով արտահայտում էր իր երախտիքը:

- Վրաստանում ճանաչված դիրիժոր Դավիթ Մուկերիայի գլխավորած նվագախումբը, որի հետ

ինձ բազմիցս բախտ է վիճակվել համագործակցել, շատ վարպետորեն էր ցուցադրում դաշնամուրի մենակատարումը՝ նրբորեն առանձնացնելով գունային հնչերանգությունը, ընդգրկվածությունն ու միաժամանակ բարդությունը: Արդեն Սան Սենսի համերգին, որը, ինչպես հայտնի է, ձեւաչափի փոփոխություն էր կրել, երգահանը առաջին հատվածի սոնատային ձեւաչափում իրականացրեց շատ ավելի հստակ կոմպոզիցիա: Իսկ եզրափակիչ հատվածը ամբողջովին առանձնացավ առաջին մասից, որն ինչպես միշտ, Մամիկոն Նահապետովն իրականացեց իրեն հատուկ ամենաբարձր մակարդակով,- նշեց 11-ամյա խոստումնալից դաշնակահարուհին:

Նշենք, որ նոյեմբերի 1-9-ը Թբիլիսիի Կոնսերվատորիայի Մեծ դահլիճում եւ Ջանսուղ Կախիձեի անվան Թբիլիսիի երաժշտական-մշակութային կենտրոնում, ջութակահարուհի Վարիկո Ճումբուրիձեի եւ Մամիկոն Նահապետովի համերգները՝ Բախի, Սեն Սանսի եւ Լիստի ստեղծագործությունների կատարմամբ, անցկացվում են Թբիլիսիում Կամերային երաժշտության միջազգային փառատոնի շրջանակներում:

ՆՈՐ ՕԲՅԵԿՏ

«ԱՐՄԱԹ» ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԲԱՑՎԵՑ ՆԱԵՎ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ

Նոյեմբերի 1-ը Ախալցիխեում նշանավորվեց երկու իրադարձություններով: Այդ օրը քաղաքում բացվեց տարածաշրջանում երկրորդը՝ «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի (ՋԱՀ) ներկայացուցչության գրասենյակը եւ Վրաստանում 4-րդ «ԱրՄաթ» ինժեներական լաբորատորիան:

«ԱրՄաթը» տեղի փոքրիկներին հնարավորություն է ընձեռում գեղեցիկ կահավորված եւ ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած կրթական միջավայրում ծանոթանալ տեղեկատվական տեխնոլոգիաներին, ինժեներիային եւ մաթեմատիկային:

Ախալցիխեում «ԱրՄաթ» ինժեներական լաբորատորիայի հիմնման ծրագիրը ֆինանսավորել է հայաստանյան «Հրայր եւ Աննա Հովնանյան» հիմնադրամը: «ԱրՄաթ»-ների հիմնման ծրագիրը Ջավախեթիում իրականացվում է ՋԱՀ-ի Վրաստանի ներկայացուցչությունը՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության» հետ համագործակցությամբ:

Բացման արարողությանը մասնակցում էին տեղական իշխանությունների, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, գործարարներ, հասարակական ու մշակութային գործիչներ, հյուրեր Հայաստանից:

Արարողությունը մեկնարկեց ՋԱՀ-ի Հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանի խոսքով:

- Վրաստանի իշխանության ներկայացուցիչների հետ քննարկել ենք «ԱրՄաթ» կրթական ծրագիրը նաեւ վրացական դպրոցներում ներդնելու հարցը: Այն ամբողջությամբ թարգմանված եւ հարմարեցված է նաեւ վրացի երեխաներին,- շնորհավորելով ներկաներին նորաբաց կենտրոնի առթիվ՝ ասաց նա:

«Արմենպրես-Վրաստան»

Նկարում.- Ելույթ է ունենում Սոս Սահակյանը: